

ՀԱՅՐԵՆԻԳ

Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Նորընտիր Բաղ. Ժողովոյ անդամներէն 11 ք հրատարած ըլլալով, ըստ որոշման Ազգային Ժողովոյ Համագումար դիւանը երէկ Բերա Ս. Պատրիարք Հօր տունը գումարելով, հետեւեալ երկպատիկ ցանկը պատրաստեց:

- Ձեռքի ցանկ Բաղ. Ժողովոյ անդամներէն
- 1 Ալիքսան էֆ. Խորասանճեան
 - 2 Աւետիս » Հարէնց
 - 3 Աւետիս » Բօլոլեան
 - 4 Գէորգ » Բըրճեան
 - 5 Գէորգ » Բանասեան
 - 6 Գրիգոր » Սէլիմիէճեան
 - 7 Գրիգոր » Բարակէօզեան
 - 8 Ենովք » Տէմիրճիպաշեան
 - 9 Թադէոս » Պէկեան
 - 10 Կարապետ » Յովասափեան
 - 11 Համբարձում » Մաքսուլեան
 - 12 Մկրտիչ » Գիւրքճիխանլեան
 - 13 Յակոբ » Արշակ
 - 14 Յարութիւն » Թիւրապեան
 - 15 Յարութիւն » Մանուկեան
 - 16 Յարութիւն » Սամանճեան
 - 17 Յարութիւն » Մէրեթի-Գուրի
 - 18 Յովհաննէս Պէյ Տատեան
 - 19 Նիկողոս էֆ. Աշնանեան
 - 20 Նիկողոս » Սուլուխանեան
 - 21 Ռուբէն » Գրիգորեան
 - 22 Ստեփան » Փափազեան

ՀՐԱՒԷՐ ԱՌ ԱԶԳ. ԵՐԵՎԱՆԻ

Ազգային Ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ Յուլիս 29 'ի Մայր եկեղեցի 'ի Գումգաբու:

Ատեանը պիտի բացուի ճիշտ ժամը 7ին և գոցուի 10ին:

Հրահրեալ են երեսփոխան էֆէնտիւները՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ:

1877 Յուլիս 25 Պ. Կ.

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Պիւտճէ կեդր. սնտուկի.

Բ. Հրահանգ բարեկարգութեան Ազգ. վարժարանաց:

Ատենադպիր

Հ. Ս. Աւետիս

ԴՊՐՈՑ ԵՒ ԱԶՍՈՒԹԻՒՆ

Ի՛նչ.

Ինչպէս որ տեսանք Բաղաքական

Տնտեսութիւնը՝ այն ամենակարևոր գիտութիւնն է, որ մարդու ուսուցանէ խնայողութեամբ ապրիլ և իւր դրամը, ժամանակը և աշխատութիւնը չափաւորութեամբ և օգտակարին գործածել:

Բայց զայս ևս կը փութանք յաւելուլ թէ ինչպէս որ շնայողութիւնը մոլութիւն մ'է, այսպէս ալ չափազանց խնայողութիւնը, ծայրայեղ աշխատութիւնն ալ մոլութիւն մ'է:

Այս երկուքին միջին աստիճանն է գովելին:

Ձի եթէ շնայողութիւնը տուներ կործանէ և անաշխատութիւնը անբարեխառնութեան և մինչև իսկ անառակութեան առաջնորդէ զմարդ, չափազանց խնայողութիւն և ծայրայեղ աշխատութիւնն ալ մեր կենաց և մեր անձին կը վնասեն: Ինչպէս որ Աւետարանն ալ խիստ գեղեցիկ և ազդուութեամբ կըսէ: «Ձե՛ն տո՛ղի, ե՛րբ զօրօրս արեւոյ շնորհքս և զօրս քո՛ն»:

Ուրեմն երջանկութիւնը չափաւոր տնտեսութեան և ժուժկալ աշխատութեան մէջ կը կայանայ: Այն ամեն գործի որ ձեռնամուխ պիտի ըլլաս, նախ քան թէ կարելի է. եթէ համոզուած ես որ կարելի է և աշխատութիւն, ջանք և կորով կը պահանջէ, հաւաքէ զանոնք և ամենայն փութով աշխատէ. և ապահով եղի՛ր որ ձեռքէդ չ'պիտի պրծի:

Անօգուտ ժամանակ անցունելը մահացու մեղք է, բոլոր մեր անցեալ վայրկեաններուն համարը պարտական ենք տալու:

Արդէն երկու աւուր կեանք ունինք, զայն ևս քնոյ, կերակրոյ, ճամբու և զբօսանաց կը զոհենք, ուրեմն ե՛րբ պիտի աշխատինք, ե՛րբ պիտի ուսանինք:

Բայց երբ որ մեր ամեն գործերը կարգի դնենք, դրական եղանակով մը զայն գործածենք, պիտի տեսնենք թէ տակաւին բաւական ժամեր կան ուսանելու համար:

Մարդու կոչումը աշխատութիւն է, անձանձիր և տոկուն աշխատութիւն պէտք է որ սկսած գործերնիս գլուխ հանենք և յաջողուածի մը տիրանանք:

Ոչնուազ կարեւոր է պարզութիւնը, զի սա՛ կը քամահրէ այն ամեն ճոխութիւնները որոնց հիմունքը աւերակներու վրայ զետեղուած են, զի պարզութիւնը կը ծաղրէ այն շքեղութիւնը, որ ան-

դընդին եղերքը հասած, անգիտէ թէ շքեղութիւն կոչուածը բաւիղ մ'է, ուր կ'ապրի և չ'զգար, ուսկից քանի ելնել ճգնի, այնքան սուղի. թոյն մ'է որ թունաւորէ առանց իւր ներգործող մահը տեսնելու:

Պարզութիւնն է որ աշխարհի ունայն և սին հաճոյքները կը հեզնէ, և դէպի ճշմարտին դէպի դրականին ձգտիլ առաջնորդէ զմարդ:

Խիստ օգտակար կըլլար, եթէ ողն կէտերը լուրջ ուշադրութեան առնուելով մեր զաւակաց 'ի մանուկ տիոց սքրտերնուն մէջ տողորուէին, և այս պարտականութիւնը գլխաւորաբար մեր դասատուաց կը պատկանի:

Դասատուներուն պարտքը՝ մեքենաբար իրենց դասերը աւանդել չէ միայն, այլ ուսանողները իրենց դասախօսութեանց ոգւոյն թափանցել տալ է:

Խիստ գեղեցիկ կ'ըսէր անուանին Բէսթալօծժի:

« Դասատուաց բարոյական ամենամեծ ազդեցութիւնը պէտք է որ զիւր աշակերտները առաջնորդէ ճոխութիւնները շքեղութիւնը և կենաց նիւթական հաճոյքները անգոմնել և քամահրել, ու սոցա փոխարէն մտաց և որտի վայելքները բարուց պարզութիւնը արդարութեան և ազատութեան փոյթն ու եռանդը ծաւալել: »

Ճոխութիւնը, շքեղութիւնը և կենաց նիւթական հաճոյքները վաղանցիկ բաներ են, որ ստուերի մը պէս, երազի պէս անցնին գնան, մտաց և որտի վայելքներն են որ քանի՛ հիննան, այնքան արմատ արձըկեն, ազատութեան եռանդըն է, որ երթալով աճի:

Դասատուաց պաշտօնը շատ մեծ է, կարժէ որ նոցա դիրքը խիստ բարձր ըլլայ, զի նոցա պաշտօնը սոսկ կարգալ գրել ուսուցանել չէ, այլ մեր կապեալ կաշկանդեալ սերունդը խաւարէն 'ի լոյս, անդունդէն 'ի նաւահանդիստ և կործանումէն 'ի փրկութիւն առաջնորդել է. ամեն պարագայի մէջ բարին ճշմարտը և վսեմը կամ թէ ուրիշ բառով ըսենք, գիտութիւնը, արդարութիւնը և ազատութիւնը՝ իւր ամեն մերկութեամբն մատնանիչ ցցունելով:

Մեր այժմու սերնդին վիճակը յուսադրական հանգամանք մը չի կրեր, նորա մոլութիւնները անտարբերութիւնը, և

դէպի վերանորոգումունեցած սառն ընթացքը մերկացնել և նմա նոր ոգի, որ կորով և նոր մի զարկ տալ պէտք է:

Այս է ուսուցիչներուն պաշտօնը: Բնաւ մի՛ տրտնջար թէ քո ազգին վիճակը նախանձելի երեւոյթ մը չ'ընծայէր, այլ տրտնջա՛ թէ քո անհատական կեանքը նախանձելի վիճակ մը չ'ունի, մի՛ գանգատիր թէ օտարը քու վրան չի խօսիր, թէ քու դոյութեան կարեւորութիւն չիտար, այլ գանգատէ՛ թէ դու ի՞նչու քու անձիդ վրայ չես խօսիր, թէ դու քո անձին ի՞նչու կարեւորութիւն չես տար: Մի՛ գանգատիր թէ քու ազգը թշուառ է, աղքատ և անօգնական է, այլ գանգատէ՛ թէ դո՛ւ ի՞նչու աղքատ ես, ի՞նչու անօգնական ես, քննէ՛ պատճառները և դարմանելու ճարը տե՛ս, քու անձին աղքատութեան և թշուառութեան պատճառը, մի՛ այլուր որոնե՛ր. քու անձիդ վըրայ փնտռէ՛:

Յիսուն տարիէ՛ ՚ի վեր եթէ մեր ազգը լուրջ և ասպետական դաստիարակութիւն մը առնէր, եթէ փոխանակ վերացական և սնտոի երեւոյթներէ խաբուելու իւր առտնին տնտեսութեան իւր անհատական կենաց բարօրութեան և իւր դպրոցներու բարեկարգութեան աշխատէր, եթէ փոխանակ չոր ու ցամաք խօսքերով մէկ մէկու գլուխ պատռելու իրարու խօսք հասկնալով ամենքնիս ալ մի և նոյն նպատակի մը ծառայէինք ոչ այս հալածումները կրէինք, ոչ այս կամայն հովէն դողայինք կամ այս ու այն ալեաց խաղալիկ ըլլայինք և ոչ այս անբասող վիճակին մատնուէինք:

Է՛հ . . . շատ դառն է եղեր հայրենեաց սիրոյ հիւանդութիւնը:

Կը վերջացնեմք ֆաղ. Տնտեսութեան վրայ մեր վեր ՚ի վերոյ տեսութիւնը և դպրոցներու Հոգաբարձութեանց և դաստուաց մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք սոյն ամենակարեւոր գիտութեան վրայ:

Երկու սեռի ուսանողաց համար ալ խիստ կարեւոր է սոյն գիտութիւնը, զի բարեւոք տնտեսութեամբ միայն կարող կ'ըլլան կինը՝ ընտանեկան կենաց ներքինը կառավարել և այրը՝ արտաքինը:

Արդէն դասագիրքը ալ չեն պակսիր, լուսահոգի Նիկողայոս Զօրայեան սակից 28 տարի առաջ ազգին սոյն զգալի պակասը լցուցած է իւր փոփոխական փիլիսոփայական քննարկի և պատուական աշխատութեամբն:

Մեծ. Հ. Փառնակեան Օթօ Հիւպնէրի երկասիրութիւնը թարգմանած է Կոնստանտնուպոլիս փոփոխական անուամբ, որ աւելի նախակրթարաններու մէջ կարժէ որ աւանդուի:

Իսկ ուսումնարաններու համար ժողէֆ կարնիէի պատուական գործը կայ թարգմանեալ ՚ի մեծ. Կ. Ս. Իւթիւճեանէ:

Եւ տակաւին հետզհետէ կուգան ՚ի լոյս, եթէ ազգը կարեւորութիւն տայ սոյն օգտակար գիտութեան որ մայր է բարօրութեան հարստութեան և աղատութեան:

Մինչեւ որ ժողովուրդ մը չի հարբստանայ, չի կրնար բարեւոք ապագայ մը ձեռք բերել:

Խ. Յ. Ստեփան

Մալաթիայէն՝

. . . Խմբագիր

Անցեալ տարի Մալաթիոյ Ս. Լուսաւորիչ վանուց հողային կալուածները, ըստ նոր օրինաց պետութեան, յանուն ազգայնոյ մի Բո՛լոս ընելու համար կառավարութեան խնդիր մատուցուեցաւ. սակայն յիշեալ վանուց պահապան Տ. Սահակ չքահանան « Ազգը վանուց կալուածոց մէջ երբէք իրաւունք չունի. նոքա ի սկզբանէ անտի իմ հայրենական ժառանգութիւնս են » ըսելով դատ բացաւ Ազգին դէմ:

Թէև ազգայնոյ մի քաջութեամբ տասերեք կտոր ջրարբի արտերու նորոգ ֆոնդ գրուեցաւ, բայց մերթ կրօնափոխութեան սպառնալտօք և ստէպ տեղւոյս առաջնորդ Սրապիոն եպիսկոպոսի թոյլ ու յոյլ ընթացքէն օգուտ քաղելով՝ ցարդ կալուածները իւր յափշտակիչ ճիւղաններուն տակ պահեց:

Հուսկ ուրեմն Սրապիոն եպիսկոպոսը ազգայնոց բուռն թախանձանքէն զերծիլ չկարենալով՝ խնդիրը քանիցս ի Պատրիարքարան իմացուց:

Անցեալները Բ. Դրան հրամանաւ յիշեալ չքահանան ի Կ. Պօլիս ուղուեցաւ. նա ալ Լատինաւարով ըմբոստացաւ, և ցարդ Լատինաց եկեղեցին ապաստանած է՝ առանց իւր եղբայրները վանքէն հանելու:

Կառավարութիւնը քանիցս պահանջեց Սահակը, բայց Լատինք չը տուին:

Վախճանը չեմ գիտեր ո՛ւր պիտի յանգի. բայց առ այժմ սաչափ մ'ալ կը յաւելում, որ եթէ Սրապիոն եպիսկոպոս Սահանադրութեան դէմ ունեցած թըշնամական ոգին ի բաց մերժելով՝ ազգասիրաբար բարեհաճէր զայն գործադրել, շատո՛նց յիշեալ կալուածները Ազգին ձեռքն անցած էին:

. . . Խմբագիր, հաճեցէք ներկայս հրատարակել ի տեղեկութիւն Ազգին:

Որոյ եմ անձնուէր
8 Յուլիս 1877 Ստեփան Մ. Մարտիրոս
Մալաթիա

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Չըբբանի գայմագամը Անդրիանուպօլսոյ կուսակալին յուլիս 24 թուով հեռագրաւ կը ծանուցանէ թէ Ռուսք Ենի-Չաղարայէն մեծ կորուստով ետ մըղուեր և Օսմանեան զօրքերը երկու թընդանօթ և 800 վերարկու ձեռք ձգեր են: Նոյնպէս Սիւլէյման փաշայի բանակը թշնամին մինչև Խային-Պօղաղի կիրճերը վանելով, անցքին բերանն ալ բռներ է:

— Դանուբի ընդհանուր հրամանատար Մէհմէտ Ալի փաշայի կողմանէ եկած հեռագրէ մ'ալ տեղեկութիւն կառնումք թէ Գալաֆթաթէն վիտինի վրայ ուումք արձկուելով, Օսմանեան մարտկոցներն ալ պատասխաներ են. Ռուսական ումքերը գլխաւորապէս կառավարութեան ապարանքին վրայ ուղղուեր են որ զինուորական վարչութեան պաշտօնատեղին է. և սակայն ընդ ամէնը մէկ զինուոր մեռեր և բնակիչներէն ե-

րեք հոգի թեթև կերպով վիրաւորուեր են. իսկ պաշտօնատեղեաց եղած վնասը թեթև է:

— Դարձեալ Մէհմէտ Ալի փաշա թըրնօվայի կառավարիչէն տեղեկանալով կը ծանուցանէ թէ երկաթուղւոյն մօտը 10ի չափ օժանդակ զինուոր թշնամւոյն 20 ձիաւոր զօրաց վրայ յարձակելով, հեռագրիտակ մը և քանի մը կտոր զգեստ առեր են. թշնամին փախեր է:

— Դարձեալ Դանուբի հրամանատարը տեղեկութիւն կուտայ թէ երեքշաբթի օր օժանդակ գունդերը թշնամւոյն 40ի չափ ձիաւոր զօրաց Բաղկրատի գաւառին Բուրտէնչ գիւղէն դէպի Սարը-Նուսօլէր Կիւղաքաղաքը երթալը տեսնելով, Բըզլար գիւղի Չէրքէզ ձիաւորներուն իմաց տրուեր է. որոնք 180 հողւոյ չափ Ապազալայի կամուրջին մօտ թշնամւոյն հանդիպելով, կռուեր և ուսերէն մէկ սպայ, մէկ տեղակալ և 12 զինուոր սպաններ, մէկն ալ գերի բռներ են. իսկ մընացեալք փախեր են:

— Դարձեալ Դանուբէն լուր տրուած է թէ Ահմէտլի դիւղը ապստամբ Պուլղարք վաթսուն տաճիկ կին և տղայ դըպրոցի մը մէջ մեռուցած ըլլալով, 500ի չափ օժանդակ զօրք զրկուեր է յիշեալ գիւղը, որոնք թուղլա-Ալանի բնակչաց հետ միանալով, Ռուսական ռահահորդաց գունդի մը հետ կռուեր և անոնցմէ հինգ հոգի և ձի մը սպաններ են, բազմաթիւ դրաստ ալ աւար առնելով: Այս օժանդակ զօրքերը թշնամւոյն դրաւած քսան կառքը որք Տաճկաց կը վերաբերին եղեր, ազատեր են:

— Ուրիշ հեռագիրներ ալ կը հաստատեն թէ Ռուսք Ենի-Չաղարայէն և Գըզանլըխէն ելնելով, Խայէն-Պօղաղէն անդին վանուեր են, կիրճը օսմ. զօրաց ձեռքը մնալով: Ենի-Չաղարայի մէջ ալ Սուլէյման փաշայի զօրքերը երկու թընդանօթ և խել մը պատերազմական մըթերք առեր են:

— Ուրբաթ գիշեր վոսփորի քանի մը գիւղերուն մէջ լուսած թնդանօթի դէպքը հետեւեալ կերպով կը պատմէ Լաթիւրքի:

« Ռուսական նաւ մը գիշերուան ժամը էին ծովափէն դէպի Շիլէ մօտենալով, երեք հատ տաճկական վաճառականական փոքր նաւ բռներ և նաւատինները ցամաքը հանելէ վերջը, նաւերը կրակի տուեր է. նոյնպէս Շիլէի մէկ կողմը հեռուն տեսնուած նաւու մը վըրայ ալ թնդանօթ պարպելով, թնդանօթի պատասխան ընդուներ է անկէ: Յետոյ փախեր է:

« Ռուսք կը պնդեն թէ իրենք Տաճկաստանի քրիստոնէից օգնելու և զանոնք պաշտպանելու բուռն եռանդ մը ունին. արդ կրակի տրուած նաւերէն երկուքը օսմ. հպատակ քրիստոնէից կը վերաբերէին, զոր գիտէր անշուշտ Ռուսական հրձիգ շոգենաւը, վասն զի անցագրերը կանխաւ տեսած էր »:

— Սթամպուլ լրագիրը պատերազմին վրայ անհիմն լուրեր հրատարակելով, Տըպագրական տեսչութեան հրամանաւ մինչեւ յաւարտ պատերազմի դադարման հրաման ստացաւ:

— Վեհ. Սուլթանը պատերազմի վայրերէն մայրաքաղաքս եկող գաղթական ընտանեաց բնակութեան յատկացուց Պէյլէրպէյի պալատան քովի շէնքերը ուր ծառայները և աղաները կը բնակէին:

— Բէուֆ բաշա շաբաթ օր մայրաքաղաքըս վերադարձաւ:

— Ֆար տիւ Պօսֆօրի նայելով, նախկին մեծ Եպարզոս Միտհաթ փաշա պաշտօնով մը լոնտրա, փարիզ, Պէրլին և Վիէննա պիտի երթայ:

— Տաճիկ լրագիրք պաշտօնական յայտարարութեամբ կը ծանուցանեն թէ կայսերական հրամանաւ Բէուֆ փաշա, Ապտիւլ-Քէրիմ փաշա, Ահմէտ փաշա, Սալիֆէթ փաշա և Համիտ պէյ դատաստանի կոչուած ըլլալով, պատերազմական ատենը հետեւեալ անձերէն կազմուեր է:

Նախագահ, Նամըք փաշա,

Անդամք. Հալիմ փաշա, ոստիկանութեան պաշտօնեայ Ահմէտ Համիտ փաշա, Ասորեստանի կուսակալ Էօմէր Ֆէյզի փաշա, գնդապետի գլուխ Մահմուտ փաշա և Հասան Բուշտի փաշա, Ալի Նիզամի փաշա զօրապետները:

Այս ժողովը արդէն սկսեր է Բէուֆ փաշայի, Ապտիւլ-Քէրիմ փաշայի և Սաֆվէթ փաշայի գատաստանը տեսնելու կայսերական հրաման մը իջրէֆ փաշան, Շքօտրայի նախկին հրամանատար Մահմուտ փաշան և Արտահանի հրամանատար Հասան Սապրի փաշան ալ գատաստանի ենթարկած է: Պատերազմական գործոց նախարարի գայմագամ Մահմուտ փաշայի յանձնուած է սոյն կայսերական հրամանին գործադրութիւնը:

— Վեհ. Սուլթանին թիկնապահներէն մէկ քանին Ֆիլիպէ և Անդրիանուպօլիս գացին ժողովրդեան վիճակը քննելու համար:

— Պատմէն եկող զօրավար ճէմիլ փաշա այս շաբթու Եռուսու կը մեկնի:

— Բուսուսուի նաւային զօրութեանց հրամանատարութիւնը գաւառին կուսակալ Ահմէտ փաշայի յանձնուեր է:

— Արդարութեան ատենին պաշտօնեաներէն 33 հոգի խնդրագիր տուեր են մեծ Եպարզոսին ի պահանջել հարկին մայրաքաղաքիս քաղաքապահ զինուոր ըլլալու համար:

Մեծ Եպարզոսը սիրով ընդուներ է:

— Նորատունկեան մեծ. Յակոբ էֆօր զինուորական նպաստից մասնաժողովին անդամ է, կեդրոնական մասնաժողովոյ սնտուկին ամսէ ամիս 1000 զրշ տալ խոստացեր է:

— Իսկիւտարի հանրակառաց ընկերութեան բաժնետէրերէն մեծ մասը ընկերութեան կառքերը և ձիերը պատերազմական նպաստից մասնաժողովին տըրամադրութեան ներքև դրեր են: Հետևաբար 100 ձիէն 55ը որոնք շատ զօրաւոր են, խոշոր թնդանթները կրելու ստիճանուեր են:

— Կ. Պօլսոյ Գաշլարի դեռապանը պատերազմական ծախուց համար 8700 ՊՐշ նուիրեր է:

— Լէվանթ Հէրալտ երէկուրն է ի վեր նորէն սկսաւ հրատարակուիլ:

կայսերական հրամանաւ՝ փրիզրէնի նախկին կառավարիչ Ֆէհիմ փաշա Իսլամայի,

Վիտինի նախկին կառավարիչ Հազդը փաշա Ճանիկի,

Մուսուլի նախկին կառավարիչ Վէսի փաշա Երզնկայի կառավարիչ անուանեցան:

— Միլիտարէս փաշայի կին, Արիսթարքի իշխանուհին քաղաքական պատճառներով մայրաքաղաքէս դուրս հաննուելով, կզգինբը խրկուեցաւ:

— Երէկ իրիկուն ժամը Վին թօփհանէի Քըլըճ-Ալի մզկիթը հրապարակային աղօթք կարդացուեցաւ:

— Անդրիանուպօլսոյ ամբուլթեանց շինութեան հսկող Հալէթ փաշա կէլիպօլու գացեր է Պուլաիրի ամբուլթեանց շինութիւնը փութացնելու համար:

— Բիւրայէի (Հնդկաստան) մէջ օսմբանակին համար 16,000 Բուպի հաւաքուեր է:

— Տրապիզոն մնացած խել մը թնդանթները տեղւոյն բնակչաց օգնականութեամբ փութով կարին խրկուած ըլլալով, Մեծ Եպարզոսը հեռագրաւ շնորհակալութիւն յայտնեց բնակչաց կուսակալին միջոցաւ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՐՁԱՐԱՆ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի 1876 ԴԵԿՏ.
ԻԻՍԿԻԻՏԱՐ ԻՃԱՏԻԹԷ

Սոյն վարժարանը որ գրեթէ երկու տարիէ ի վեր հաստատուած է, իւր յարատև և կանոնաւոր ընթացքովը մայրաքաղաքիս կրթական հաստատութեանց ամենէն օգտակար և յառաջադէմներէն մին եղած է, ինչպէս ապացուցին այս տարուան հրապարակային հարցաքննութիւններն. ի խնդրոյ քանի մը բարեկամաց և ի տեղեկութիւն յիշեալ վարժարանը աշակերտ տալ փափաքողաց հոս կը դնենք վարժարանին ընդունելութեան պայմանները և ուսմանց ծրագրը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՐՁԱՐԱՆ
ՄԱՆՁԵՐՈՒ ԵՒ ԱՂՋԿԱՆՑ
ԻԻՍԿԻԻՏԱՐ ԻՃԱՏԻԹԷ-ՓՈՂՈՑ ԹԻՒ-

ՊԱՅՄԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ
ՅԵՐԵԿՈՒԹԻԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ

Յօդուած Ա. Նախկին Թարանի աշակերտք պիտի վճարեն ամսական (1/4) մէկ քառորդ օսմանեան ոսկի:

Բ. Ուսումնարանի աշակերտք պիտի վճարեն ամսական (1/2) կէս օսմանեան ոսկի:

Գ. Դաշնակի համար (1/2) կէս օսմանեան ոսկի:

Դ. Ամսականները միշտ կանխիկ են:

Ե. Երեք ամսէ պակաս բացակայութեանց ամսականները պիտի պահանջուին: Նոյնպէս կէս ամսական, քառորդ ամսական չպիտի ընդունուին:

Չ. Վարժարանս ամէն տարի քննութիւնէ վերջ առ առաւելն տասնըհինգ օր պարապոյ ժամանակ (վազանս) ունի: Այս միջոցին վարժարանը միշտ բաց է և ուզողը կրնայ գալ իր սերտողութիւններն շարունակել հսկողութեան ներքև:

Մանի. Մանրամասն տեղեկութեանց համար դիմել տնօրէնութեանս:

ՊԱՅՄԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ
ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ

Յօդ. Ա. Գիշերօթիկ աշակերտք պարտին վճարել ամիսը 2 ոսկի օսմանեան եռամսեայ կանխիկ:

2. Անկողնի և զգեստուց պիտոյք աշակերտք պիտի բերեն, հերմակեղէնները աշակերտաց տուելը պիտի լուացուին:

3. Աշակերտք 15 օրը անգամ մը անպատճառ իրենց ծնողաց տեսութեան պիտի երթան, ուզողները ամեն շաբաթ իրիկուն կրնան երթալ, և երկուշաբթի կանուխ դպրոց մտնել:

4. Գիշերօթիկ աշակերտաց բժշկի և դեղօրէից պիտոյք ծնողք պարտին վճարել:

5. Մանր հիւանդները անմիջապէս տուն կուղարկուին:

6. Թէ ցերեկօթիկ և թէ գիշերօթիկ աշակերտաց ուսմանց պիտոյք ծնողք պիտի վճարեն:

7. Յերեկօթիկ աշակերտներէն անոնք որ կուզեն վարժարանիս մէջ ճաշել, պարտին (5) երեք արծաթ մէծիտ ամսական աւելի վճարել կանխիկ:

ՆԱԽԱԿԵՐՏԱՐԱՆ
Ա. Տարի
Նախաճիւղերով աշակերտք հոժար ստացին քառօրեայ ստան շրջանը

1. Հայերէն ընթերցանութիւն, Հայերէն պարզ գրափարժութիւն, Թուանշան ճանշնալ և գրել:

Բ. Տարի
1. Հայերէն ընթերցանութիւն—չարունակութիւն, քերականական պարզ հոլովմունք և բերանացի կրթութիւնք:

Թուարանութիւն, Թուանշան գրել, կարգալ և գրել)

Գ. Տարի
1. Հայերէն քերականութեան առաջին մասը համառօտ բերանացի,

Ազգային պատմութիւն համառօտ, Թուարանութիւն (չորս գործողութիւնք) Գեղազրութեան շարունակութիւն, Դաշնակ (ըստ հաճոյս):

ՈՒՍՈՒՄՆԱՍՐԱՉ
Ե. Տարի Ա. դաս
Հայերէն քերականութեան Ա. մասը համառօտ և Բ. մասին զխաւոր կանոնները,

Ազգային պատմութիւն համառօտ, Բնական և Քաղաքական աշխարհագրութիւն համառօտ:

Թուարանութիւն (խառն թիւք, կօտորակք հասարակ և տասանորդական) մեթրական չափ և համեմատական կանոնք,

Գծագրութիւն:

Գաղղիարէն, ընթերցանութիւն, կանոնաւոր և անկանոն բայեր, մանր թարգմանութիւնք, կարճ պարբերութիւնք գոց ընել և օրինակել:

Անգլիերէն:

Տաճկերէն, ընթերցանութիւն, բառագիտութիւն:

Գեղազրութիւն Հայերէն, Տաճկերէն, Գաղղիարէն:

Մարմնամարզութիւն (ժիմնասթիք): Առողջաբանութիւն պարզ խրատներով:

Դաշնակ (ըստ հաճոյս): Բնական պատմութիւն:

Ե. Տարի Բ. դաս
Հայերէն, Գերականութիւն ընդարձակ, վերլուծութիւն, գրարարէ յաշխարհարար թարգմանութիւնք:

Քաղաքական աշխարհագրութիւն ընդարձակ և Ուսումնական աշխարհագրութիւն:

Մաթեմատիք Թուարանութիւն, կարողութիւնք և արմատք, նշանակ, յառաջատուութիւն, բաղադրեալ շահ, հասոյթ ևն. աւարտ Թուարանութեան:

Ընդհանուր Ազգաց Պատմութիւն, հին պատմութիւն Ա. մասն (Մամուրեանի դասագիրք): Գծագրութիւն (տէսէն լիւէէն): Գծագրութեան և գեղազրութեան շարունակութիւն:

Գաղղիարէն.—համառօտ քերականութիւն ամբողջ ուղղագրութիւն, լուծումն քերականական և տրամաբանական. թարգմանութիւն Գաղղիարենէ ի Հայ, գրաւոր կրթութիւնը, ուսում մըն բերանացի,

Անգղիերէն.—չարունակութիւն, Տանկերէն.—ընթերցանութիւն, բառագիտութիւն. թարգմանութիւն Տանկերէնէ ի Հայ, Մարմնամարզութիւն, Համառօտ Առողջաբանութիւն. Սկզբունք բնագիտութեան (ֆիզիք) Դաշնակ (ըստ հանոյս) Բնական Պատմութիւն, շարունակութիւն.

Զ. Տարէ Գ. Դաս

Հայերէն.—վերծանութիւն ընտիր հեղինակաց, Տրամաբանութիւն, Հայ, Գրագիտութիւն. Թուաբանութիւն.—քաղուած. Երկրաչափութիւն և Գրահաշիւ. Տօմարակալութիւն ընդհ. Ազգաց Պատմութիւն.—չարունակութիւն (Բ. Մաս դասագիրք Մամուրեանի) Պատմ. գըրականութեան Հայոց: Դիցարանութիւն, Գծագրութիւն և Գծագրիտութիւն.—չարունակութիւն.

Գեղագրութիւն.—չարունակութիւն. Գաղղիարէն քերականութիւն ընդարձակ կըրթութեամբ. թարգմանութիւն Գաղղիարենէ ի Հայ. և փոխադարձ. ոտանաւոր գրուածներ արձակի վերածել:

Անգղիերէն.—չարունակութիւն. Տանկերէն.—քերականութիւն (սարք). թարգմ. Տանկերէնէ ի Հայ. և փոխադարձ. ուղղագրութիւն, բառագիտութիւն արաբերէն. մասնաւոր շարագրութիւնը. (սէնէտ, իմուխապէր ևն).

Բնագիտութիւն.—չարունակութիւն, տեսական և փորձառական (թէօրիք է էքսփերիմենթալ) Սկզբունք քիմիայի. Մարմնամարզութիւն.—չարունակութիւն. Առողջաբանութիւն.—չարունակութիւն. Դաշնակ (ըստ հանոյս).

Է. Տարէ Դ. Դաս

Հայերէն.—Գրագիտութիւն ընդարձակ. Պատմութիւն գրականութեան ընդհ. Ազգաց մատենագրաց ընթերցումն և հետեւողութիւն.

Մաթէմատիք.—չարունակութիւն երկրաչափութեան և գրահաշիւի, ընդարձակ. Առեւտրական նամակագրութիւն Հայերէն, Գաղղիերէն և Անգղիերէն. ընդհ. Ազգաց Պատմութիւն.—չարունակութիւն.

Բնագիտութիւն և Գիմիա.—չարունակութիւն. Գծագրութիւն և Պատկերհանութիւն. Գծագրիտութիւն.—չարունակութիւն. Գեղագրութիւն.—չարունակութիւն. Գաղղիերէն.—Գրագիտութիւն. թարգմանութիւնը Գաղղիարենէ ի Հայ. և Հայերէնէ ի Գաղղիարէն (չար.) նամակագրութիւն, մանրապատում գրուած (նարրասիօն) և ամփոփումն (րէզիւմէ), վերծանութիւն հեղինակաց արձակ և ոտանաւոր:

Տանկերէն.—քերականութիւն (չար). բառագիտութիւն պարսկերէն, թարգմանութիւն եւրոպական լեզուէ մը ի Տանկի. դիւանագրական օրինաց ուսումն (պիւրօքրասի) Ժիմնասթիք.

Առողջաբանութիւն.—չար. Դաշնակ (ըստ հանոյս)

Ը. Տարէ Ե. Դաս

Բանասիրութիւն (ֆիլոլօփի). Գրութեան վարժութիւնը արձակ և ոտանաւոր. Գաղղիարէն լեզուաւ տօմարակալութիւն. Գրահաշիւի և Երկրաչափութեան ընդհանուր քաղուածք, եռանկիւնաչափութիւն. Բնագիտութեան և Գիմիայի ընդհանուր քաղուածք.

Ընդհ. Ազգաց Պատմութիւն.—չար. և վերջ. Գաղղիարէն.—Գրագիտութեան շարունակութիւն, այլ և այլ գրութիւն արձակ և ոտանաւոր:

Պատկերհանութիւն. Տանկերէն.—չարագրութիւն, Արաբերէն և Պարսկերէն վարժութիւն. Մարմնամարզութիւն.—չար. Առողջաբանութիւն.—չար. Դաշնակ (ըստ հանոյս) Պատրաստութիւն վերջին քննութեան:

Ուսմանց ծրագրին (փռօկրամի) մէջ նշանակուած ուսմանց առարկայներէն աղջկանց յատկացեալներն են.

Հայերէն իւր ճիւղերով Գաղղիարէն իւր ճիւղերով Անգղիերէն » » Մաթէմատիք Տօմարակալութիւն) Բնագիտութիւն Առողջաբանութիւն մասնաւոր Պատմ. Հայ. և Ընդհ. Ազգաց Գծագրութիւն իւր ամէն ճիւղերով Գեղագրութիւն » » » Դաշնակ ըստ հանոյս Մարմնամարզութիւն աղջկանց յատուկ ոճով. Կար և ձեւ իւր ամէն ճիւղերով: Ծանօթ. Գերմաներէն ուսանիլ փափաքող աշակերտաց համար զատ սակարկութիւն կըլլուի նոյնպէս Մարմնամարզութեան և Դաշնակի:

Ի Լ Ա Ն

Նաֆիէ նէզարէթի ճէլիլէսինտէ Ծօսէ եօլլար պաշ միւֆէթթիլի միւսիւ Պըրիեօնըն թահթը նէզարէթինտէ օլարագրէսսամ Տաճատ վէ հաթթաթ Ալի էֆէնտիլէր մարիֆէթիլլէ պու քէրրէ թաֆսիլ վէ իլավէլի վէ մէվազըլի հարպիէի կիւզէլճէ կէօսթէրիլ վէ ումում իսթիֆատէ իտէճէք տէրէճէտէ խարիթա թանզիմ օլունմուշ աըր. ֆիյաթը պիլր օնլուք գայիմէ տըր. միւվէզըլէր եէտինտէ վէ բիզա ֆաշա խանընտա Պետրոս Գալէնտէրեան Նօ. 1 մաթ պուլաւ սընտա սաթըլմագտա տըր:

Տէլանը դէլալէթ ինվանը նաթի ճէրհօմ 56 երեսէ բաղկացեալ տետրակ մ'է, յորում կը պարունակուին Հայազգի նըշանաւոր տաճկախօս բանաստեղծին երկերը:

Ամեն Հայ դրամաճառաց քով կը ծախուի ի դին մէկ քառորդ թղթադրամ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԵՏԵՅԱՆ ՉԱԻԱՆ ԵՒ ՓԱՌՆԱԿ Ա.

Գրեց ծերունին Գարբէլ Պատկանեան ընթերցասէր ազգայինը, որ անուշտ ազգային տաղանդաւոր հեղինակին « Անուշավանը » և այլ գործերը կը յիշեն, մեծ հաճութեամբ պիտի կարգան այս նոր գործը՝ որ դարձեալ մեր ազգային պատմութենէն առնըուած է:

Կը ծախուի Ս. Ղ. և Եղմանեան գրատունը Եէնի ճամի Զիլիկիրլէր ճատտէսի թիւ 2, և ուրիշ գրավաճառաց քով: Գին 1 ֆր. 50 սանդիմ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՑ ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՆԻՈՍԻ

Թարգմանաց Ե. Մ. Ս.

Հայ ժողովրդեան ընթերցասիրութիւնը գոհ ընելու մտօք՝ Մարտիարեան ընդհանուր անուամբ հետզհետէ օգտակար և կրթական գործեր պիտի հրատարակենք: Այս անգամ սկիզբ կընենք այս ձեռնարկութեան՝ Երկրաչափութեան և Գիմիայի ընդհանուր թարգմանութիւն, և աներկմիտ եմք որ Հայ հասարակութիւնը քաջ զգայով այս Մարտիարեանի օգտակարութիւնը պիտի փութայ արդեամբ քաշալերել զմեզ որպէս զի սոյն ձեռնարկութեան մէջ յարատեւենք:

Կը ծախուի Եէնի-ճամի Զիլիկիրլէր ճատտէսի թիւ 2, Ս. Ղ. և Եղմանեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Գին 1 ֆրանք 25 սանթիմ:

ԽՈՐՀՐԴԱԿՈՐ ԿՂՁԻ ՕԴԱՊԱՐ ՆԱԻԱԲԵԿՆԵՐ

Ազգայնոցմէ խիստ լաւ ընդունելութիւն գտնող Անտոնի լընան օրտան օրտան վէպին հեղինակ ժիւլ վէրնի մէկ ուրիշ հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործըն է, թարգմանեալ Մ. Մամուրեան էֆէնտիէ, որուն առաջին հատորը իզմիրէն Պօլիս հասած ըլլալով, կը ծախուի Եէնի-ճամի Զիլիկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղ. և Եղմանեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով: Ամբողջ գործը երեք հատորէ կը բաղկանայ: Գին 2 ֆր:

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Երուսաղիմայ Ս. Յակովբեանց ուխտէն մեծարգոյ Գ. Ս. Խաչայեանի աշխատասիրած, և տեղոյն վանական մամլէ նի լոյս եկած այս կարեւոր գործը՝ կծախուի մայրաքաղաքիս բոլոր գրավաճառաց խանութները:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Է Մուրա-Վայտեա, Հոնեօրթ և Է Լեհասթան Ուղեւորութիւն յամին 1876

Արշակայ Մ. Ալթունեան

Ազգին ամենակարեւոր պիտոյքներէն մին համարուած վիճակագրութեան մէկ մասը կը լեցնէ սոյն երկասիրութիւնը որ ազգասէր և հայրենասէր սրտի և զգացմանց մէկ կենդանի պատկերն է:

Հեղինակը Մուրա-Վայտեա, Հոնեօրթի և Լեհասթան պտրտելով, տեղոյն հայ ժողովրդեան վարուց և բարուց, ազգային սովորութեանց վրայ տեղեկութիւններ հաւաքել և կաշառնք ի լոյս ընծայել է ապագային իրեն շահ մատակարարող փոքրիկ գումարը սոյն գործին տպագրութեանը զօհելով:

Կը փափաքեմք որ սոյն հեղինակին անձնուրութիւնը օրինակ և գրգիռ ըլլայ շատերու, որով միայն կարելի է Հայոց Ազգին ամբողջ վիճակագրութիւնը պատրաստել:

Կը հրաւիրեմք բոլոր հետաքրքիր ազգայինները որ սոյնէն օրինակ մը առնելով օտար աշխարհաց մէջ գտնուած մեր ազգակից և հայրենակից եղարաց վրայ լիւրի տեղեկութիւն ստանան:

Կը ծախուի ամէն գրավաճառաց քով, Գին 5 քառորդ թղթադրամ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայրենիք երեքշաբթի և շաբաթ օրերը կը հրատարակուի:

Տարեկան բաժանորդագինն է մէկ հարիւրնոց թուղթ կանխիկ:

Վեցամսեայն մէկ յիսուննոց: Եռամսեայն մէկ քսաննոց և տասնոց: Միամսեայն մէկ տասնոց: Ծանուցման տալը երկու դրուչ է: Եմբագրութեան ուղղեալ նամակ կամ դիրետ չը տրուի:

Լրագրոյ վերաբերեալ ու է գիր պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Մ. Յ. Մելիքեան Րիզա բաշա խան թիւ 1:

ՏԵՐ-ԽՄԲԱԳԻՐ

Մ. Յ ՄԵԼԻՔԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ Բիզա փաշա խան թիւ 3